

Եվրոպայի օրը Հայաստանում, 2012թ.

ԵՄ պատվիրակությունը Հայաստանում կազմակերպել էր «Եվրոպայի օր» միջոցառումը, որը կայացել էր Հյուսիսային պողոտայում մայիսի 12-ին: Տեղեկատվական տոնավաճառի ժամանակ ներկայացվել էին ԵՄ- Հայաստան համագործակցությունը: ԵՄ-ի հետ համագործակցող ՀԿ-ները ունեին իրենց վրանները, որտեղ նրանք տեղեկատվություն էին տրամադրում իրենց գործունեության և ծրագրերի շնորհանդեսների, գրքույկների և բրոշյուրների տեսքով:



Այդ կազմակերպություններից մեկն էր Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնը, որի անդամներ Անահիտ Աբրահամյանը, Արփինե Մաժինյանը և Հովհանես Աբրահամյանը ներկայացնում էին հետաքրքրված հյուրերին կազմակերպության առաքելությունը, կատարված ծրագրերը, որի ցանկում էր և ԵՄ-ի կողմից աջակցվող “Երիտասարդ կանանց հզորացումը գյուղական շրջաններում” ծրագիրը: Տեղեկատվական տոնավաճառի այցելուները հնարավորություն ունեին ծանոթանալ ծրագրի ուսուցման նյութերին և վերցնել բրոշյուրներ, որպեսզի ավելին իմանան ՔՀԶԿ-ի և նրա ծրագրերի մասին:



Տեղեկատվական ցուցահանդեսին զուգահեռ ներկայացվել էր Եվրոպական մշակույթը: Լեհաստանի պարային խումբը հաճելի մթնոլորտ ստեղծեց իրենց կատարմամբ, բացի այդ շնորհիվ հայ հանդիսատեսը ծանոթացավ լեհական ավանդական պարի տարրերին: Եվրոպական մշակույթը ներկայացվել էր նաև

խոհանոցով, որտեղ հյուրերը կարող էին համտեսել եվրոպական ուտեստներ: Բացի այդ, անցկացվեցին մրցույթներ և վիկտորինաներ, որի հաղթողներին մրցանակներ հանձնվեցին: Տեղեկատվական տոնավաճառին հաջորդեց համերգը, որտեղ Երեվանի երիտասարդությունը անցկացրեց հուզիչ պահեր, ունկնդրելով երաժիշտներին Հայաստանից և Եվրոպայից:

Արփինե Մաժինյան